

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված տարիքի:

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Միաժամանակ սահմանվել է, որ այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության, դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, մարդուն առևանգելու, բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ավազակության, գողության, կողոպուտի, շորթման, առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու, ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու կամ շորթելու, տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու, խուլիգանության համար:

Նշվածից ակնհայտ է, որ որոշակի բացառություններով քրեական պատասխանատվության ընդհանուր տարիք սահմանված է 16 տարեկանը, որոշ դեպքերում 14 տարեկանը, այսինքն անձի այն տարիքում, երբ դեռ վերջինս համարվում է անչափահաս:

Չնայած այն հանգամանքին, որ 16 (14) տարեկանից սկսած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգիրքը անչափահասների համար տվել է առանձին կարգավորումներ, մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ գլխում հստակ առկա են անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները: Հատկանշական է, որ անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս կիրառվում են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր կանոնները՝ հաշվի առնելով 14-րդ գլխով սահմանված առանձնահատկությունները, ընդ որում, հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Ի տարբերություն ընդհանուր կանոնի, անչափահասների նկատմամբ կարող է նշանակվել հետևյալ չորս պատժի տեսակները. տուգանք, հանրային աշխատանքներ, կալանք և որոշակի ժամկետով ազատագրկում:

Տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում, ընդ որում տուգանքի չափը սահմանափակված է պատիժ նշանակելու պահին ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Կալանքը տասնհինգ օրից երկու ամիս ժամկետով նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին լրացած անչափահասի

նկատմամբ:

Ազատագրկումն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, իսկ միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, մինչև տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով, իսկ տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը տասը տարի ժամկետով:

Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը: Մինչև տասնվեց տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատագրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել յոթ տարին:

Տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անչափահասների նկատմամբ ազատագրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել տասը տարին, իսկ ըստ դատավճիռների համակցության՝ ազատագրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասներկու տարին:

«Քրեական օրենսգիրքը սահմանել է նաև, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները. նախազգուշացում, ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում, ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով:

Անչափահասի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց: Եթե անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափում է, ապա տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է պատժից ազատվել, եթե դատարանը գտնի, որ պատժի նպատակներին կարելի է

հասնել նրան անչափահասների հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով: Հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը երեք տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան չափահաս դառնալը:

Անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատագրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը, ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը, առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

Մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր կանոններով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են կիսով չափ:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ քրեական օրենսդրությունը հիմնված լինելով պատժի անխուսափելիության, անհատականացման, մարդասիրության և այլ սկզբունքների վրա, անչափահասների նկատմամբ ցուցաբերում է շատ ավելի մեղմ մոտեցում, քան չափահասների նկատմամբ:

Ի տարբերություն ընդհանուր կարգով նշանակվող պատժի ընտրության չափանիշներին, օրենսդիր իշխանությունը դատարաններին լիազորել է նաև անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնել վերջիններիս դատերակությունը:

Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ օրենսդիր մարմինը չի նախատեսել ցմահ ազատագրկում անչափահասների նկատմամբ: Որքան էլ ծանր լինի անչափահասի կողմից կատարված հանցանքը, ինչքան էլ ծանր հետևանքներ առաջացրած լինի այն միևնույն է ցմահ ազատագրկման դատապարտել անչափահասին չի կարելի, որը բխում է մարդասիրական սկզբունքներից:

Հայկազ Գալստյան

*ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ*